ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2022 թվականի _____ «_____»-ի N ____- Ն

ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Սեյսմիկ պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության բնակչության ուսուցման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Հանրային հեռարձակողի խորհրդին՝ եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացնել առաջարկություններ՝ սեյսմիկ պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության բնակչության ուսուցման նպատակով տեսալսողական հաղորդումների ընդհանուր ծավալի վերաբերյալ՝ ընդգրկելով սեյսմիկ պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի ներկայացուցիչներին կամ օգտագործելով նրանց կողմից տրամադրված նյութերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Կառավարության 2022 թվականի
_____ ____-ի N ____Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ

1. **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով կանոնակարգվում են սեյսմիկ պաշտպանության բնագավառի հիմնահարցերով Հայաստանի Հանրապետության բնակ-չության ուսուցման գործընթացի հետ կապված հարաբերությունները:
2. Սեյսմիկ պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապե-տության բնակչության ուսուցման հիմնական նպատակը նրանց վարվելակերպի կանոնների իմացության մակարդակի բարձրացումն է:
3. Սեյսմիկ պաշտպանության բնագավառում բնակչության ուսուցման հիմնախնդիրներն են՝

- իրավունքների, պարտականությունների և վարվելակերպի մասին ուսուցումը.
- երկրաշարժից պաշտպանվելու վարքականոնների մասին ուսուցումը.
- ուժեղ երկրաշարժով կամ նրա սպառնալիքներով պայմանավորված հետևանքների վերացման ուսուցումը.

4. Սույն կարգով սահմանվում են «Սեյսմիկ պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության բնակչության ուսուցողական ծրագրերին ներկայացվող պահանջները և դրանց ընդունման ընթացակարգը:
5. Սույն կարգի դրույթները նախատեսվում են Սեյսմիկ պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության բնակչության

ուսուցողական ծրագրերի աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների համար:

6. Ուսուցողական ծրագրերի աշխատանքների կատարման համակարգող մարմինը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունն է:

1. ԿԱՐԳՈՒՄ ԳՈՐԾԱԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Սույն կարգում գործածվող հիմնական հասկացություններն են.

- **բնակչության ուսուցում՝** սեյսմիկ պաշտպանության բնագավառում բնակչությանն անհրաժեշտ նվազագույն գիտելիքների ու վարվելակերպի կանոնների իմացության և իրականացման ապահովմանն ուղղված գործընթաց, մասնավորապես երկրաշարժից պաշտպանվելու վարքականոնների և բնակչության տարբեր շերտերի սեյսմիկ պաշտպանության հիմնադրույթների ուսուցում.
- **դասախոսություն՝** ուսուցման ձև, որի ընթացքում ուսուցանվողներին ներկայացվում է երկրաշարժից պաշտպանվելու վարքականոններ, երկրաշարժի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն, երկրաշարժից առաջ, ընթացքում և հետո բնակչության գործողությունների վերա-բերյալ տեղեկատվություն, սեյսմիկ պաշտպանության բնագավառին առնչվող իրավական ակտեր, գիտական նյութեր, հարցեր, խնդիրներ, միջազգային փորձ.
- **սեմինար՝** գործնական ուսուցման ձև, որի ընթացքում ուսուցանվողները՝ համապատասխան դասախոսի ղեկավարությամբ քննարկում են սեյսմիկ պաշտպանության բնագավառին առնչվող հիմնահարցերը և երկրաշարժից պաշտպանվելու վարքականոնները.
- **խաղ-վիկտորինա՝** սեյսմիկ պաշտպանության ոլորտի վերաբերյալ գիտելիքների բանավոր կամ գրավոր հարցերին պատասխանելու խաղ.
- **սպորտային և շարժական խաղ-վիկտորինաներ՝** ուսուցման մրցակցային գործնական-կիրառական մեթոդով (պաստառներ, դիդակտիկ նյութեր) հարց-պատասխաններով իրականացվող խաղ, իրավիճակային իրադարձությունների արհեստական նմանակումների (իմիտացիաների) միջոցով, երկրաշարժից պաշտպանվելու վարքականոնների թեմայի շրջանակներում (բնակչության տարբեր շերտերի համար).
- **հեռուստառադիոհաղորդում՝** հեռուստատեսությամբ կամ ռադիոյով տարածվող պատկերներ և (կամ) հնչյուններ և (կամ) այլ տեղեկատվություն պարունակող կենդանի կատարման կամ ամրագրված սահմանափակ տևողությամբ նյութ, որը բովանդակության և կազմակերպչական իմաստով ինքնուրույն և ավարտուն է, համարվում է հեղինակային և (կամ) հարակից իրավունքի օբյեկտ.
- **տարհանում վարժանք՝** վարժանքների ձևով գործնական պարապունքների կազմակերպում: Երկրաշարժի դեպքում բնակչության շրջանում անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ փորձ և հմտություն ձեռք բերելու գործնական պարապմունք:

- **սոցիալ-հոգեբանական նախապատրաստում՝** բնակչության իրազեկվածության, կրթության, պատրաստվածության, սոցիալական և անձնային պատասխանատվության մակարդակի բարձրացում արտակարգ իրավիճակում:

- **ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ**

8. Սեյսմիկ պաշտպանության բնագավառում բնակչության ուսուցման ձևերն են՝

- դասախոսություն.
- սեմինար.
- տարհանում վարժանք.
- խաղ-վիկտորինա.
- սպորտային և շարժական խաղ-վիկտորինաներ.
- հեռուստառադիոհաղորդում.
- զանգվածային լրատվության միոցներով հրապարակումներ.
- սոցիալ-հոգեբանական նախապատրաստում:

9. Բնակչության իրազեկության և պատրաստվածության բարձրացումն ապահովվում է ուսուցման պետական համակարգերի միջոցով:

Ուսուցման պետական համակարգն ընդգրկում է հետևյալ ենթահամակարգերը.

- բնակչության տարբեր շերտերի անմիջական ուսուցում՝ սկսած հանրակրթական դպրոցից (հրահանգիչների, դասախոսների, ուսուցիչների, բժիշկների և այլոց միջոցով).
- ուսումնական ծրագրեր, մեթոդական ձեռնարկներ, համապատասխան ցուցադրական նյութեր, պաստառներ, ծալաթերթիկներ.
- հեռուստառադիոհաղորդումներ և հրապարակումներ զանգվածային լրատվության միջոցներում.
- սոցիալ-հոգեբանական նախապատրաստում տեսագործնական դասընթացների, թեմատիկ քննարկումների ու թեմային առնչվող դիրքորոշումների վերլուծության միջոցով:

Ուսուցման պետական համակարգն ապահովում է տրամադրվող տեղեկատվության հավաստիությունը և մատչելիությունը:

1. **ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

10. Սեյսմիկ պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության բնակչության ուսուցմանն ներկայացվող պահանջներն են.

- սեյսմիկ պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության բնակչության նախապատրաստման համար ուսուցողական ծրագրերը մշակվում են հիմնվելով տեղական և միջազգային փորձի վրա.
- ուսուցողական ծրագրերը մշակելիս հաշվի են առնվում թիրախային խմբերի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները.
- իմացական գիտելիքները համադրվում են պրակտիկ-վարքային վարժանքների հետ.

11. Ուսուցողական ծրագրերը պետք է պարունակեն.

- երկրաշարժի, սեյսմիկ վտանգի գնահատման և սեյսմիկ ռիսկի գնահատման և նվազեցման վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն.
- ուժեղ երկրաշարժի և դրա սպառնալիքի դեպքում բնակչության վարքականոնների մասին տեղեկատվություն.
- երկրաշարժից տուժած բնակչությանն առաջին օգնության և հոգեբանական օգնության ցուցաբերման վերաբերյալ տեղեկատվություն.
- երկրաշարժից առաջ, ընթացքում և հետո բնակչության գործողություն-ների վերաբերյալ տեղեկատվություն.
- տարհանման վարժանքների կազմակերպման վերաբերյալ տեղեկատվություն.
- իրավունքների, պարտականությունների և վարվելակերպի մասին տեղեկատվություն:

1. **ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ**

- Ուսուցողական ծրագրերը պետք է համաձայնեցվեն լիազոր մարմնի կողմից: Հայսատանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինը ըստ տարվա հիմնական միջոցառումների պլանի անցկացնում է բնակչության ուսուցումը ընդգրկելով բնակչության տարբեր շերտերին:

13. Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Առողջապահության, ինչպես նաև Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունները, ՀՀ մարզպետարանները և Երևանի քաղաքապետարանը իրենց ուսումնական և զարգացման ծրագրերի ամենամյա պլաններում

ներառում են ուժեղ երկրաշարժից պաշտպանվելու իրազեկվածության բարձրացմանն ուղղված ուսուցողական ծրագրեր, ինչպես նաև համատեղ միջոցառումներ Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության հետ:

14. Ծրագրերի ֆինանսավորումն իրականացվում է պետական և օրենքով չարգելված այլ միջոցներով: